ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 9 մարտի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Վ. Պողոսյանի

Քննության առնելով քաղաքացի Լաուրա Երիցյանի դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

1. Քաղաքացի Լաուրա Երիցյանը 19.02.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթների սահմանադրականությունը:

2. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթները ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 8-րդ, 18-րդ, 19-րդ, 31-րդ եւ 91-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»:

Դիմողը նշում է, որ վճռաբեկ դատարանը բողոքը վերադարձնելու մասին 04.11.2009թ. որոշմամբ նշել է, որ չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթները՝ առանց կոնկրետ հստակեցնելու իր դիրքորոշումը, առանց պատճառաբանելու եւ իրավական հիմնավորում տալու, թե օրենքի որ դրույթը չի պահպանել բողոքաբեր անձը:

Դիմողը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը, նման որոշմամբ իրեն զրկել է իր խախտված իրավունքները

պաշտպանելու հնարավորությունից, ինչը, իր հերթին, հակասում է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 14.1-րդ, 91-րդ հոդվածներին, ըստ որոնց՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են եւ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջեւ, ՀՀ արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան:

3. ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-690 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1.-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերի դրույթները /233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ն եւ 2-րդ կետերը եւ 3-րդ մաս/ ճանաչվել են Սահմանադրությանը համապատասխանող եւ հետագայում փոփոխության չեն ենթարկվել:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով, 69-րդ հոդվածով եւ ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 25-րդ հոդվածի գ) կետի, 26-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետի պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Լաուրա Երիցյանի գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

9 մարտի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/1-6